

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ

Կրթության, սոցիալական և
առողջապահության ոլորտի

Երևան - 2011

Գիրք հարցմանց

Կրթության, սոցիալական և
առողջապահության ոլորտի



Երևան-2011

Ժողովրդավարական պետության կայացման ճանապարհին առանձնակի կարևորվում է քաղաքացիների իրավագիտակցության բարձրացումը: Ուղեցուցում փորձ է արվում պատասխանել երեք մեծ ոլորտների՝ կրթությանը, սոցիալական պաշտպանությանը և առողջապահությանը վերաբերող առավել հաճախ տրվող հարցերին: Ընդ որում, այդ հարցերին սպառիչ պատասխան տալու համար փորձ է արվել ի մի բերել յուրաքանչյուր ոլորտի վերաբերյալ ՀՀ օրենսդրական դաշտում սփռված (մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Քաղաքացիական կացության ակտերի մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքները, ՀՀ ընտանեկան, քաղաքացիական, աշխատանքային օրենսգրքերը) ամբողջական տեղեկատվությունը:

Ուղեցուցում առանձնակի ուշադրություն է նվիրվել հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանությանը վերաբերող հարցերին:

Ուղեցույցը տպագրվել է «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության դանիական կազմակերպության և Դանիայի միջազգային զարգացման գործակալության օժանդակությամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	5
ԱՆԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԶԲԱԴՎԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	14
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	29
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	48
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	59

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՆԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

- Ո՞ր ուսումնական հաստատություններում կարող է իրականացվել հաշմանդամների միջնակարգ, միջին մասնագիտական և բարձրագույն կրթությունը:

«Հաշմանդամների միջնակարգ, միջին մասնագիտական և բարձրագույն կրթությունը իրականացվում է ընդհանուր տիպի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հատուկ ուսումնական հաստատություններում»:

- Պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվելու ի՞նչ իրավունքից կարող են օգտվել հաշմանդամները:

«Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած հաշմանդամները՝ այլ հավասար պայմանների դեպքում, օգտվում են պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվելու առաջնահերթ իրավունքից»:

- Ո՞ր խմբերի հաշմանդամներն են ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնելիս ընդունվում

պետական բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ:

«Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ»:

- Ո՞ր դեպքում են պետական բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգից սովորող հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք տեղափոխվում տվյալ ուսումնական հաստատության վճարովի համակարգ:

«Պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգում սովորող հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության վճարովի համակարգ, եթե 18 տարին լրանալուց հետո չեն ձանաչվել հաշմանդամ»:

- Ո՞ր դեպքում են պետական բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող հաշմանդամի կարգավիճակ ունեցող անձինք տեղափոխվում տվյալ ուսումնական հաստատության անվճար համակարգ:

«Պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող անձինք ուսումնառության ընթացքում հաշմանդամի կամ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ երեխայի կարգավիճակ ստանալու դեպքում տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության անվճար համակարգ:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում հաշմանդամ ուսանողն ուսումնական հաստատության վարչակազմ պետք է ներկայացնի հաշմանդամությունը հաստատող փաստաթուղթ»:

- Ինչպե՞ս է իրականացվում հաշմանդամների մասնագիտական ուսուցումը, վերաորակավորումը և որակավորման բարձրացումը:

«Հաշմանդամների մասնագիտական ուսուցումը, վերաորակավորումը և որակավորման բարձրացումն իրականացվում են վերականգնման անհատական ծրագրերին համապատասխան՝ մասնագիտացված կամ ընդհանուր տիպի ուսումնական հաստատություններում, ձեռնարկություններում (այդ թվում՝ ուսումնաարտադրական) և կազմակերպություններում:

Մասնագիտական նախապատրաստման, ֆինանսավորման և որակավորման ընթացքում հաշմանդամների նյութական ապահովումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով»:

- Ո՞ր հանրակրթական ուսումնական հաստատություններում կարող է իրականացվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթությունը:

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հանրակրթական հաստատություններում՝ հատուկ ծրագրերով»:

- Ի՞նչ կրթական փաստաթուղթ են ստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ամփոփիչ ատեստավորում անցած անձինք:

«Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանրակրթական, մասնագիտական և հատուկ կրթական ծրագրերի ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած անձանց տրվում է կրթության համապատասխան մակարդակի ավարտական փաստաթուղթ (վկայական, ատեստատ, դիպլոմ)»:

- Ի՞նչ կրթական փաստաթուղթ են ստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ամփոփիչ ատեստավորում չանցած անձինք:

«Կրթական ծրագիրը չավարտած անձանց տրվում է սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանք»:

- Ո՞ր կազմակերպությունն է գնահատում երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

«Երեխաների ֆիզիկական, մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտման ու գնահատման, նրանց ընդունակություններին և կարողություններին համապատասխան կրթության իրականացման ձևի ընտրության վերաբերյալ եզրակացությունները տրվում են բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնների կողմից»:

- Ո՞ւմ կողմից է երեխան ներկայացվում բժշկահոգեբանամանկավարժական գնահատման:

ա) ծնողների (այլ օրինական ներկայացուցիչների) դիմումի հիման վրա՝ իր նախաձեռնությամբ կամ կրթության, առողջապահության և սոցիալական ապահովության համակարգի իրավասու մարմինների և հասարակական կազմակերպությունների առաջարկով,

բ) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշման հիման վրա:

- Ո՞վ կարող է մասնակցել երեխայի բժշկահոգեբանամանկավարժական գնահատմանը:

«Երեխայի բժշկահոգեբանամանկավարժական գնահատումը կազմակերպվում է ծնողի (կամ նրա այլ օրինական ներկայացուցչի) մասնակցությամբ»:

- *Ի՞նչ նպատակով է կազմակերպվում ներառական կրթությունը:*

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման սոցիալական հարմարվածությունը և նրանց հասարակական ներառումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ուսումնական հաստատություններում կազմակերպվում է ներառական կրթություն»:

- *Ո՞ր ուսումնական հաստատություններում կարող է կազմակերպվել ներառական կրթություն:*

«Ներառական կրթություն կարող է կազմակերպվել այն ուսումնական հաստատություններում, որոնք ապահովված են կրթության առանձնահատուկ պայմաններով: Ներառական կրթության իրականացման կարգը և ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների ցանկը սահմանում և հաստատում է կրթության պետական կառավարման լիազոր մարմինը»:

- *Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ո՞ր երեխաներն են օգտվում ուսումնական հաստատություններում պետական աջակցությունից:*

«Հատուկ կրթական հաստատություններում և ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում

պետական աջակցությունից օգտվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող հետևյալ երեխաները.

ա) խոսքի ծանր խանգարումներ, հնչյունահնչոյթային և խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաները,

բ) լսողության խանգարում՝ չլսող (խուլ), թույլ լսող և լսողության կորուստ ունեցող երեխաները,

գ) տեսողության խանգարում՝ կույր, թույլ տեսնող, ուշ կուրացած, շլոթյուն ունեցող երեխաները,

դ) մտավոր հետամնացություն ունեցող երեխաները,

ե) հենաշարժական համակարգի խանգարումներ ունեցող երեխաները,

զ) հոգեբանական զարգացման խնդիրներ՝ ուսումնական ունակությունների զարգացման յուրահատուկ խանգարումներ ունեցող երեխաները,

է) վարքային և հուզականային ոլորտի խանգարումներ ունեցող երեխաները»:

- Ո՞ւմ կողմից և ե՞րբ է ուսումնական հաստատությունում ստեղծվում հատուկ կրթության կառուցվածքային ստորաբաժանում:

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության իրավունքը ապահովելու նպատակով ուսումնական հաստատություններում կարող են առանձնացվել հատուկ կրթության կառուցվածքային ստորաբաժանումներ, բացառապես կրթության պետական կառավարման լիազոր մարմնի որոշմամբ»:

- Որո՞նք են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ծնողների (այլ օրինական ներկայացուցիչների) իրավունքները:

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ծնողները (այլ օրինական ներկայացուցիչները) իրավունք ունեն՝

ա) մասնակցելու երեխայի անհատական ուսումնական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,

բ) անձի առավել արդյունավետ դաստիարակության և զարգացման համար հատուկ գիտելիքներ ստանալու նպատակով որպես ունկնդիր ուսումնական հաստատության ղեկավարի թույլտվությամբ մասնակցելու միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունների պարապմունքներին,

գ) ստանալու անհրաժեշտ խորհրդատվություն հատուկ կրթության հարցերով»:

- Ո՞ւմ կողմից է վկայագրվում երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

«Բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի եզրակացության հիման վրա տարածքային կառավարման պետական մարմինը վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը»:

- Որտե՞ղ կարող է իրականացվել նախադպրոցական տարիքի հաշմանդամ երեխաների դաստիարակությունը:

«Նախադպրոցական տարիքի հաշմանդամ երեխաների դաստիարակության և անհրաժեշտ վերականգնողական օգնության համար առավել բարենպաստ հնարավորություններ ստեղծելու նպատակով ընդհանուր տիպի մանկական նախադպրոցական հիմնարկներում նրանց համար ստեղծվում են հատուկ պայմաններ»:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

- Ո՞րն է աշխատանքային օրենսդրության գործողության ոլորտը:

«Աշխատանքային օրենսդրությունը և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող մյուս նորմատիվ իրավական ակտերը տարածվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ծագած աշխատանքային հարաբերությունների վրա՝ անկախ նրանից, թե որտեղ է կատարվում աշխատանքը՝ Հայաստանի Հանրապետությունում, թե՞ գործատուի հանձնարարությամբ՝ այլ պետությունում»:

- Որո՞նք են աշխատանքային հարաբերություններ ծագելու հիմքերը:

«Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ՝ աշխատանքի ընդունվելու մասին անհատական իրավական ակտով»:

- Ի՞նչ պայմանագիր է կնքվում տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անձանց հետ:

«Տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անձանց հետ կնքվում է ժամանակավոր աշխատանքային պայմանագիր»:

- *Ութեր չեն կարող աշխատանքի ներգրավվել հանգստյան, ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին:*

«Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անձինք աշխատանքի չեն կարող ընդգրկվել հանգստյան, ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին, բացառությամբ մարզական և մշակութային միջոցառումներին մասնակցելու դեպքերի»:

- *Ի՞նչ է աշխատանքային պայմանագիրը:*

«Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ»:

- Ո՞րն է աշխատողի աշխատանքային գործունեության մասին տեղեկություններ ներառող հիմնական փաստաթուղթը:

«Աշխատանքային գրքույկը»:

- Ո՞ր դեպքերում չի կարող փորձաշրջան նախատեսվել:

«Փորձաշրջան չի կարող նախատեսվել, եթե աշխատանքի են ընդունվում՝

- 1) տասնութ տարին չլրացած անձինք,
- 2) ընտրովի պաշտոն զբաղեցնողները, ինչպես նաև պաշտոնի նշանակելու համար որակավորման քննություններ հանձնած անձինք,
- 3) գործատուների փոխադարձ համաձայնությամբ այլ աշխատանքի փոխադրվող անձինք,
- 4) օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում»:

- Որքա՞ն է աշխատանքի ընդունելիս փորձաշրջանի ժամկետը:

«Փորձաշրջանի ժամկետը չի կարող 3 ամսից ավելի լինել, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի»:

- Ո՞ր դեպքում է կնքվում որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր:

«Որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր է

կնքվում, եթե աշխատանքային հարաբերությունները չեն կարող որոշվել անորոշ ժամկետով՝ հաշվի առնելով կատարվելիք աշխատանքի բնույթը կամ կատարելու պայմանները, եթե ՀՀ աշխատանքային օրենսգրքով կամ օրենքներով այլ բան նախատեսված չէ»:

- *Ի՞նչ է համատեղությամբ աշխատանքը:*

«Համատեղությամբ աշխատանքը հիմնական աշխատանքային ժամանակից դուրս, միևնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ, աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքն է»:

- *Համատեղությամբ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում համատեղությամբ աշխատողին արձակման նպաստ վճարվում է:*

«Չի վճարվում»:

- *Ո՞րն է համարվում սեզոնային աշխատանք:*

«Սեզոնային է համարվում այն աշխատանքը, որը բնակլիմայական պայմանների պատճառով կատարվում է ոչ թե ամբողջ տարին, այլ ութ ամիսը չգերազանցող որոշակի ժամանակահատվածում (սեզոնում), և որը սահմանված է սեզոնային աշխատանքների ցանկով»:

- Ի՞նչ ժամկետով է կնքվում սեզոնային աշխատանքային պայմանագիրը:

«Սինչև ութ ամիս ժամկետով»:

- Ո՞րն է համարվում անօրինական աշխատանք:

«Անօրինական է համարվում առանց ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային պայմանագրի կատարվող աշխատանքը»:

- Գործատուն ո՞ր դեպքում կարող է փոփոխել աշխատանքի էական պայմանները:

«Արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանները փոփոխվելու դեպքում թույլատրվում է փոփոխել աշխատանքի էական պայմանները»:

- Գործատուն ո՞ր դեպքում կարող է փոփոխել աշխատանքի վարձատրության պայմանները՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության:

«Առանց աշխատողի գրավոր համաձայնության՝ աշխատանքի վարձատրության պայմանները գործատուն կարող է փոփոխել միայն օրենքով կամ կոլեկտիվ պայմանագրով աշխատանքի վարձատրության պայմանները փոփոխվելու դեպքում»:

- Որո՞նք են աշխատանքի էական պայմանները:

«Աշխատողին նույն գործատուի մոտ այլ վայր աշխատանքի փոխադրելը, ինչպես նաև այլ գործատուի մոտ աշխատանքի փոխադրելը, աշխատանքի վարձատրության չափը, արտոնությունները, աշխատանքի ռեժիմը, ոչ լրիվ աշխատաժամանակ սահմանելը կամ վերացնելը, տարակարգերը և պաշտոնների անվանումները աշխատանքի էական պայմաններ են»:

- Որոշակի աշխատանքներ կատարելու իրավունքներից զրկված լինելու փաստը աշխատանքի ընդունվելիս աշխատողի կողմից թաքցնելն ի՞նչ հետևանք կարող է ունենալ:

«Որոշակի աշխատանքներ կատարելու իրավունքներից զրկված լինելու փաստը աշխատանքի ընդունվելիս աշխատողի կողմից թաքցնելը աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմք է»:

- Որո՞նք են աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու պատճառով աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմքերը:

«Գործատուն իրավունք ունի լուծել աշխատանքային պայմանագիրը, եթե աշխատողը՝

1) դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որոնց հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս,

2) ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնելիս թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք,

3) հրապարակել է պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը»:

- Օրական և շաբաթական քանի՞ ժամը չի կարող գերազանցել աշխատաժամանակի առավելագույն տևողությունը՝ ներառյալ արտաժամյա աշխատանքը:

«Աշխատաժամանակի առավելագույն տևողությունը՝ ներառյալ արտաժամյա աշխատանքը, չի կարող անցնել օրական 12 ժամից (հանգստի և սնվելու համար ընդմիջումը՝ ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից»:

- Ո՞ւմ համար է սահմանվում աշխատաժամանակի կրճատ տևողություն:

«Աշխատաժամանակի կրճատ տևողություն սահմանվում է տասնչորսից մինչև տասնվեց տարեկան աշխատողների համար՝ շաբաթական 24 ժամ, տասնվեցից մինչև տասնութ տարեկանների համար՝ շաբաթական 36 ժամ, և այն աշխատողների համար, որոնց աշխատավայրում վնասակար գործոնների սահմանային թույլատրելի մակարդակը տեխնիկական կամ այլ պատճառներով հնարավոր չէ իջեցնել աշխատողների առողջության և անվտանգության մասին իրավական ակտերով սահ-

մանված՝ առողջության համար անվտանգ մակարդակի, աշխատաժամանակը սահմանվում է ոչ ավելի, քան շաբաթական 36 ժամ»:

- Ի՞նչ ժամանակահատվածում է գործատուն պարտավոր աշխատողին պատշաճ կարգով ծանուցել կազմակերպության աշխատանքի (հերթափոխային) ժամանակացույցում կատարվող փոփոխության մասին:

«Ոչ ուշ, քան իրավական ակտն ուժի մեջ մտնելուց երկու ամիս առաջ»:

- Ովքե՞ր չեն կարող ներգրավվել արտաժամյա աշխատանքներին:

«1) մինչև 18 տարեկան աշխատողները,

2) առանց արտադրությունից կտրվելու՝ հանրակրթական և մասնագիտական դպրոցներում սովորող աշխատողները՝ դասերի օրերին,

3) առողջության համար վնասակար և (կամ) վտանգավոր գործոնների ազդեցության պայմաններում աշխատողները»:

- Որքա՞ն է գործատուի պահանջով թույլատրելի արտաժամյա աշխատաժամանակի տևողությունը տարվա ընթացքում:

«Գործատուի պահանջով արտաժամյա աշխատանքը տարվա ընթացքում չպետք է գերազանցի 180 ժամը»:

- Ո՞րն է համարվում գիշերային ժամանակ:

«Գիշերային ժամանակ է համարվում ժամը 22-ից մինչև 6-ն ընկած ժամանակահատվածը»:

- Շաբաթվա ընթացքում քանի՞ հանգստյան օր է տրվում մինչև 18 տարեկան աշխատողներին:

«Առնվազն երկու հանգստյան օր»:

- Որքա՞ն է ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը:

«Ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում 20 աշխատանքային օր է, իսկ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 24 աշխատանքային օր»:

- Ամենամյա արձակուրդը մասերով տրամադրելու դեպքում նվազագույնը որքա՞ն պետք է կազմի այդ մասերից մեկը:

«Ամենամյա արձակուրդը մասերով տրամադրելու դեպքում արձակուրդի մասերից մեկը պետք է կազմի առնվազն 10 աշխատանքային օր՝ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում, առնվազն 12 աշխատանքային օր՝ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում»:

- Աշխատանքի առաջին տարվա համար ե՞րբ է ամենամյա արձակուրդ տրամադրվում:

«Աշխատանքի առաջին տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է տվյալ կազմակերպությունում անընդհատ աշխատանքի վեց ամիսը լրանալուց հետո»:

- Ամենամյա արձակուրդի համար միջին աշխատավարձը ե՞րբ է վճարում:

«Ամենամյա արձակուրդի համար միջին աշխատավարձը վճարվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդն սկսելուց երեք օր առաջ»:

- Քանի՞ օրով է տեղափոխվում ամենամյա արձակուրդը, եթե ամենամյա արձակուրդի համար հաշվարկված աշխատավարձն աշխատողին սահմանված ժամկետում չի վճարվում աշխատողից անկախ պատճառներով:

«Ամենամյա արձակուրդը տեղափոխվում է այնքան օրով, որքան օրով երկարաձգվել է աշխատավարձի վճարումը, և երկարաձգված ժամանակի համար վճարումը կատարվում է այնպես, ինչպես ամենամյա արձակուրդի համար»:

- Աշխատողին մեկ տարվա ընթացքում որքա՞ն ժամանակով կարող է չվճարվող արձակուրդ տրամադրվել կողեկտիվ կամ

աշխատանքային պայմանագրերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում:

«Սեկ տարվա ընթացքում ոչ ավելի, քան 60 (աշխատանքային) օր տևողությամբ»:

- Ինչպե՞ս է կատարվում աշխատանքի վարձատրությունը ծանր, վնասակար, առանձնապես ծանր և առանձնապես վնասակար աշխատանքներ կատարելու դեպքում:

«Ծանր, վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների ցուցակով նախատեսված աշխատանքները կատարելու համար աշխատողին վճարվում է հավելում՝ նրա տարիֆային աշխատավարձի առնվազն 30 տոկոսի չափով, իսկ առանձնապես ծանր, առանձնապես վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների ցուցակով նախատեսված աշխատանքները կատարելու համար՝ առնվազն 50 տոկոսի չափով»:

- Ի՞նչ կարգով է կատարվում արտաժամյա աշխատանքի վարձատրությունը:

«Արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար, ժամային դրույքաչափից բացի, աշխատողին վճարվում է հավելում՝ ժամային դրույքաչափի առնվազն 50 տոկոսի չափով»:

- Ի՞նչ կարգով է կատարվում գիշերային աշխատանքի վարձատրությունը:

«Գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար ժամային դրույքաչափից բացի վճարվում է հավելում՝ ժամային դրույքաչափի առնվազն 30 տոկոսի չափով»:

- Ինչպե՞ս է կատարվում աշխատանքի վարձատրությունը հանգստյան և ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին:

«Հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքը, եթե այն նախատեսված չէ աշխատանքի ժամանակացույցով, կողմերի համաձայնությամբ, վարձատրվում է ժամային (օրական) դրույքաչափի կամ գործավարձի առնվազն կրկնակի չափով, կամ աշխատողին մեկ ամսվա ընթացքում տրամադրվում է վճարովի այլ հանգստյան օր, կամ այդ օրը ավելացվում է ամենամյա արձակուրդին»:

- Գործատուն ե՞րբ է պարտավոր վճարել աշխատողի աշխատավարձը:

«Աշխատողի աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և աշխատանքային օրերին վճարվում է ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը»:

- Միջին ամսական աշխատավարձի հաշվարկման պահանջ առաջանալիս ե՞րբ է միջին աշխատավարձի փոխարեն հաշվարկման համար հիմք ընդունվում աշխատողի համար օրենսդրությամբ սահմանված պաշտոնային դրույքաչափը կամ աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունվելու մասին իրավական ակտով սահմանված ամսական աշխատավարձը:

«Այն դեպքում, երբ միջին ամսական աշխատավարձի հաշվարկման պահանջ առաջանալու ամսվան նախորդող տասներկու ամիսներին աշխատողը չի ունեցել փաստացի հաշվարկված աշխատավարձ, կամ տասներկու ամիսներին առկա են աշխատողի՝ ժամանակավոր անաշխատունակության մեջ և (կամ) արձակուրդում և (կամ) ոչ իր մեղքով պարապուրդում գտնվելու դեպքեր, միջին աշխատավարձի փոխարեն հաշվարկման համար հիմք է ընդունվում աշխատողի համար օրենսդրությամբ սահմանված պաշտոնային դրույքաչափը կամ աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունվելու մասին իրավական ակտով սահմանված ամսական աշխատավարձը: Եթե սահմանված է ժամային դրույքաչափ, ապա հաշվարկների համար հիմք է ընդունվում ժամային դրույքաչափը»:

- Գործատուն ի՞նչ չափով է տուժանք վճարում, եթե աշխատավարձի վճարումն իր մեղքով կատարվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով, կոլեկտիվ պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված ժամկետների խախտումով:

«Գործատուն աշխատավարձի վճարման կետանցված յու-

րաքանչյուր օրվա համար աշխատողին վճարում է տուժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը»:

- Աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար քանի՞ կարգապահական տույժ կարող է նշանակվել:

«Աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ»:

- Ի՞նչ կարգով կարող է բողոքարկվել կարգապահական տույժը:

«Դատական կարգով»:

- Ե՞րբ է կարգապահական տույժը համարվում մարված:

«Եթե կարգապահական տույժի ենթարկելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, աշխատողը չի ենթարկվել նոր կարգապահական տույժի, ապա դա համարվում է մարված»:

- Ո՞ւմ է արգելվում ներգրավել ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներին:

«Սինչև տասնութ տարեկան անձանց, հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց»:

- Աշխատողն ինչպե՞ս է վարձատրվում երեխային կերակրելու համար նախատեսված ընդմիջումների ժամանակահատվածի համար:

«Այդ ժամանակահատվածի համար աշխատողը վարձատրվում է միջին ժամային աշխատավարձի չափով»:

- Ո՞ր մարմինն է քննում աշխատանքային վեժերը:

«Դատարանը»:

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

- Ի՞նչ միջոցների հաշվին են կատարվում պետական միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուսուցման ծախսերը:

«Պետական միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին»:

- Ի՞նչ արտոնություններ ունեն առանց ծնողական խնամքի մնացած երեխաները բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգ ընդունվելիս:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներն ընդհանուր մրցույթով պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգ ընդունվում են վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում»:

- Անհրաժեշտ առաջադիմություն ունենալու դեպքում որքա՞ն կրթաթոշակ է վճարվում միջին մասնագիտական և բարձրա-

գույն ուսումնական հաստատություններում սովորող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին:

«Սիջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, անհրաժեշտ առաջադիմություն ունենալու դեպքում, վճարվում է տվյալ ուսումնական հաստատությունում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով կրթաթոշակ»:

- Ո՞վ է համարվում առանց ծնողական խնամքի մնացած երեխա:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխա է համարվում 18 տարին չլրացած այն երեխան, ում ծնողները (կամ միակ ծնողը) մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափում են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են»:

- Ովքե՞ր են համարվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խմբին պատկանող անձինք:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք են համարվում 18-23 տարեկան այն անձինք, ում ծնողները (կամ միակ ծնողը) մինչև նրանց 18 տա-

րին լրանալը մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափում են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են»:

- Ո՞ր մարմիններն են հաշվառում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին հաշվառում են խնամակալության և հոգաբարձության մարմինները»:

- Ո՞ր մարմիններն են հաշվառում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խմբին պատկանող անձանց:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հաշվառում են խնամակալության և հոգաբարձության մարմինները»:

- Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անվճար բժշկական օգնությունն ի՞նչ միջոցների հաշվին է տրամադրվում:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անվճար բժշկական օգնությունը տրամադրվում է պետական պատվերի շրջանակներում»:

- Ո՞ր տարիքում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրամադրվում բնակելի տարածություն:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակելի տարածություն է տրամադրվում նրանց 18 տարին լրանալուց հետո»:

- Ի՞նչ արտոնություններ ունեն առանց ծնողական խնամքի մնացած երեխաները բնակելի տարածություն ստանալու առումով:

«Բնակելի տարածություն չունեցող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակտարածությունը տրամադրվում է արտահերթ՝ օրենքով սահմանված կարգով»:

- Ո՞ր դեպքում է երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը դրվում խնամակալության և հոգաբարձության մարմինների վրա:

«Ծնողների մահվան, նրանց ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողներին անգործունակ ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու, ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը դրվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների վրա»:

- *Ի՞նչ է որդեգրումը:*

«Որդեգրումը իրավաբանական այն ակտն է, որի համաձայն՝ որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ»:

- *Ե՞րբ են որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկություններ տրամադրվում օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին:*

«Օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկություններ տրամադրվում են այդ երեխաներին կենտրոնացված հաշվառման վերցնելուց երեք ամիս հետո»:

- *Ո՞ր մարմինն է կատարում որդեգրումը:*

«Որդեգրումը կատարում է դատարանը՝ երեխային որդեգրել ցանկացող անձի (անձանց) դիմումով»:

- *Ո՞ւմ պարտադիր մասնակցությամբ է դատարանը քննում երեխայի որդեգրումը հաստատելու մասին գործերը:*

«Երեխայի որդեգրումը հաստատելու մասին գործերը դատարանը քննում է խնամակալության և հոգաբարձության մարմնի և որդեգրել ցանկացող անձի պարտադիր մասնակցությամբ»:

- Ովքե՞ր կարող են երեխաների խնամակալներ (հոգաբարձուներ) նշանակվել:

«Երեխաների խնամակալներ (հոգաբարձուներ) կարող են նշանակվել միայն չափահաս գործունակ անձինք՝ իրենց համաձայնությամբ»:

- Ի՞նչ պայմաններ են հաշվի առնվում երեխայի խնամակալ (հոգաբարձու) նշանակելիս:

«Երեխայի խնամակալ (հոգաբարձու) նշանակելիս հաշվի են առնվում խնամակալի (հոգաբարձուի) բարոյական և անձնական այլ հատկանիշներ, խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունները կատարելու նրա ունակությունները, խնամակալի (հոգաբարձուի) և երեխայի փոխհարաբերությունները, երեխայի նկատմամբ խնամակալի (հոգաբարձուի) ընտանիքի անդամների վերաբերմունքը»:

- Ի՞նչ իրավական ակտի հիման վրա է երեխան հանձնվում խնամատար ընտանիք՝ դաստիարակության:

«Երեխան խնամատար ընտանիք՝ դաստիարակության է

հանձնվում երեխային (երեխաներին) ընտանիք՝ դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի հիման վրա»:

- Ո՞ր մարմինն է սահմանում հոգեզավակների խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողներին տրվող վարձատրության չափը:

«Հոգեզավակների խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողներին տրվող վարձատրության չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը»:

- Ո՞ր երեխաներն են հանձնվում խնամատար ընտանիք՝ դաստիարակության:

«խնամատար ընտանիք՝ դաստիարակության են հանձնվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաները»:

- Պահպանվո՞ւմ է արդյոք խնամատար ընտանիք՝ դաստիարակության հանձնված երեխային հասանելիք կենսաթոշակի և ալիմենտի իրավունքը:

«խնամատար ընտանիք հանձնված երեխան (երեխաները) պահպանում է իրեն հասանելիք ալիմենտի և կենսաթոշակի նկատմամբ իրավունքը»:

- Ինչպե՞ս է վերացվում երեխայի որդեգրումը:

«Երեխայի որդեգրումը վերացվում է դատական կարգով»:

- Ո՞ւմ վրա են դրվում դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ այդօրինակ այլ կազմակերպություններում գտնվող երեխաների խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունները:

«Դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում գտնվող երեխաների խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունները դրվում են այդ կազմակերպությունների վրա»:

- Ո՞ր դեպքում կարող են խնամակալները (հոգաբարձուները) խոչընդոտել ծնողների և մերձավոր ազգականների հետ երեխայի շփումը:

«Խնամակալները (հոգաբարձուները) իրավունք չունեն խոչընդոտել ծնողների և մերձավոր ազգականների հետ երեխայի շփումը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ շփումը չի բխում երեխայի շահերից»:

- Վարձատրվո՞ւմ են արդյոք խնամակալն ու հոգաբարձուն խնամակալի և հոգաբարձուի պարտականությունները կատարելու համար:

«Խնամակալն ու հոգաբարձուն խնամակալության (հոգա-

բարձրության) տակ գտնվող երեխայի նկատմամբ խնամակալության և հոգաբարձության պարտականությունները կատարում են անհատույց»:

- Ամուսիններից մեկի կողմից երեխա որդեգրելու դեպքում ե՞րբ չի պահանջվում մյուս ամուսնու համաձայնությունը:

«Երեխային որդեգրելու համար մյուս ամուսնու համաձայնությունը չի պահանջվում, եթե ամուսինները դադարեցրել են ամուսնական հարաբերությունները, մեկ տարուց ավելի համատեղ չեն ապրում, և մյուս ամուսնու բնակության վայրն անհայտ է»:

- Ո՞ւմ համաձայնությունն է անհրաժեշտ անչափահաս ծնողների երեխային որդեգրելու համար:

«Երեխային որդեգրելու համար անհրաժեշտ է նրա ծնողների գրավոր համաձայնությունը: Անչափահաս ծնողների երեխային որդեգրելիս անհրաժեշտ է նաև նրանց ծնողների կամ խնամակալների (հոգաբարձուների) համաձայնությունը, իսկ ծնողների կամ խնամակալի (հոգաբարձուի) բացակայության դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությունը»:

- Ծնողները կարո՞ղ են ետ վերցնել երեխային որդեգրելու համար իրենց տված համաձայնությունը:

«Ծնողները երեխային որդեգրելու համար իրենց տված հա-

մածայնությունը կարող են ետ վերցնել մինչև նրան որդեգրելու մասին դատարանի վճիռն ուժի մեջ մտնելը»:

- Ի՞նչ նպատակով են փոփոխվում որդեգրվող երեխայի ծննդյան վայրը և ծննդյան ժամանակը:

«Որդեգրման գաղտնիքն ապահովելու համար որդեգրողի խնդրանքով կարող են փոփոխվել որդեգրվող երեխայի ծննդյան վայրը և ծննդյան ժամանակը, բայց ոչ ավելի, քան երեք ամիս»:

- Մինչև ո՞ր տարիքի երեխա որդեգրելու դեպքում կարող է փոփոխվել որդեգրված երեխայի ծննդյան ժամանակը:

«Որդեգրված երեխայի ծննդյան ժամանակի փոփոխում թույլատրվում է միայն մինչև մեկ տարեկան երեխա որդեգրելիս»:

- Ի՞նչ հանգամանքներ են հաշվի առնվում առանց ծնողական խնամքի մնացած երեխային ընտանիքում կամ համապատասխան կազմակերպությունում տեղավորելիս:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխային ընտանիքում կամ համապատասխան կազմակերպությունում տեղավորելիս պետք է հաշվի առնվեն նրա էթնիկական ծագումը, որոշակի կրոնական ու մշակութային պատկանելությունը, մայրենի լեզուն, դաստիարակության ու կրթության հարցում հաջորդականությունն ապահովելու հնարավորությունը»:

- Ո՞ւմ վրա են դրվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունները մինչև դաստիարակության համար ընտանիքում կամ համապատասխան կազմակերպությունում նրանց տեղավորելը:

«Մինչև առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին դաստիարակության համար ընտանիքում կամ համապատասխան կազմակերպությունում տեղավորելը երեխայի խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունները ժամանակավորապես դրվում են խնամակալության և հոգաբարձության մարմնի վրա»:

- Ե՞րբ կարող է լրիվ գործունակ ծանաչվել տասնվեց տարին լրացած անչափահասը:

«Տասնվեց տարին լրացած անչափահասը կարող է լրիվ գործունակ ծանաչվել, եթե նա աշխատում է աշխատանքային պայմանագրով կամ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ»:

- Ո՞ր մարմնի որոշմամբ է լրիվ գործունակ ծանաչվում անչափահասը:

«Անչափահասը լրիվ գործունակ է ծանաչվում խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման հիման վրա»:

- Լրիվ գործունակ ծանաչված անչափահասն ո՞ւմ համաձայնու-

թյամբ կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությանը:

«Լրիվ գործունակ ծանաչված անչափահասը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ»:

- Ի՞նչ պատասխանատվություն են կրում ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուն լրիվ գործունակ ծանաչված անչափահասի պարտավորությունների, մասնավորապես՝ նրա պատճառած վնասի հետևանքով առաջացած պարտավորությունների համար:

«Ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուն պատասխանատվություն չեն կրում լրիվ գործունակ ծանաչված անչափահասի պարտավորությունների, մասնավորապես՝ նրա կողմից պատճառված վնասի հետևանքով առաջացած պարտավորությունների համար»:

- Ովքե՞ր կարող են մինչև տասնչորս տարեկան անչափահասների փոխարեն գործարքներ կնքել:

«Մինչև 14 տարեկան անչափահասների (փոքրահասակների) փոխարեն գործարքները, նրանց անունից, կարող են կնքել միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները»:

- Ո՞ր ՔԿԱԳ մարմինն է կատարում երեխայի ծննդի պետական գրանցումը:

«Երեխայի ծննդի պետական գրանցումը կատարում է երեխայի ծննդի կամ ծնողների (ծնողներից մեկի) բնակության վայրի ՔԿԱԳ մարմինը»:

- Ո՞ր ՔԿԱԳ մարմինն է կատարում գտնված (ընկեցիկ) երեխայի ծննդի պետական գրանցումը:

«Գտնված (ընկեցիկ) երեխայի ծննդի պետական գրանցումը կատարում է երեխայի գտնվելու վայրի ՔԿԱԳ մարմինը»:

- Ի՞նչ պարտավորություն ունի երեխային գտած անձը:

«Երեխային գտած անձն այդ մասին 48 ժամվա ընթացքում պարտավոր է հայտարարություն տալ երեխայի գտնվելու վայրի ոստիկանություն կամ խնամակալության և հոգաբարձության մարմին»:

- Ի՞նչ պարտավորություն ունի գտնված (ընկեցիկ) երեխայի մասին հայտարարություն ստացած ոստիկանությունը կամ խնամակալության և հոգաբարձության մարմինը:

«Ոստիկանության կամ խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է երեխայի գտնվելուց հետո՝ 7 օր-

վա ընթացքում, հայտարարել երեխայի ծննդի պետական գրանցման մասին»:

- *Գտնված (ընկեցիկ) երեխայի անվան, հայրանվան և ազգանվան մասին տեղեկություններն ո՞ւմ ցուցումով են գրառվում երեխայի ծննդի ակտում:*

«Գտնված (ընկեցիկ) երեխայի անվան, հայրանվան և ազգանվան մասին տեղեկությունները երեխայի ծննդի ակտի գրառման մեջ լրացվում են ոստիկանության կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի ցուցումով»:

- *Գտնված (ընկեցիկ) երեխայի ծննդի ակտում նրա ծնողների մասին ի՞նչ տեղեկություններ են գրառվում:*

«Գտնված (ընկեցիկ) երեխայի ծննդի ակտի գրառման մեջ նրա ծնողների մասին տեղեկություններ չեն լրացվում»:

- *Պահպանո՞ւմ են արդյոք որդեգրվածներն իրենց ծնողների (ազգականների) նկատմամբ անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները:*

«Որդեգրվածներն իրենց ծնողների (ազգականների) նկատմամբ կորցնում են անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները»:

- *Ի՞նչ իրավունքներ ունի նորածին երեխա որդեգրած կինը:*

«Նորածին երեխա որդեգրած կինն ունի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված հետծննդյան արձակուրդի և սահմանված այլ արտոնությունների իրավունք»:

- Ո՞ր իրավունքից են զրկվում այն ծնողները, ում ծնողական իրավունքները սահմանված կարգով սահմանափակվել են:

«Այն ծնողները, ում ծնողական իրավունքները սահմանված կարգով սահմանափակվել են, կորցնում են երեխային անձամբ դաստիարակելու իրավունքը»:

- Ծնողական իրավունքները սահմանափակելը ծնողներին ազատում է արդյոք երեխայի ապրուստը հոգալու պարտականությունից:

«Ծնողական իրավունքները սահմանափակելը ծնողներին չի ազատում երեխայի ապրուստը հոգալու պարտականությունից»:

- Ծնողների ծնողական իրավունքները սահմանափակելու դեպքում ո՞ւմ խնամքին է հանձնվում երեխան:

«Ծնողների ծնողական իրավունքները սահմանափակելու դեպքում երեխան հանձնվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների խնամքին»:

- Խնամակալության և հոգաբարձության մարմինը ո՞ր դեպքում

է իրավասու երեխային վերցնել ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, ում խնամքի տակ է գտնվում երեխան:

«Երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինն իրավասու է երեխային անմիջապես վերցնել ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, ում խնամքի տակ է գտնվում երեխան»:

- Երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում ծնողներից երեխային վերցնելուց հետո խնամակալության և հոգաբարձության մարմինն ի՞նչ ժամկետում է դիմում դատարան՝ ծնողներին ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով:

«Երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում երեխային ծնողներից (նրանցից մեկից) վերցնելուց հետո խնամակալության և հոգաբարձության մարմինը յոթօրյա ժամկետում դիմում է դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով»:

- Ի՞նչ կարգով է ծնողը զրկվում ծնողական իրավունքներից:

«Ծնողական իրավունքներից զրկելը կատարվում է դատական կարգով»:

- Ի՞նչ ուղղակի հետևանք է ունենում ծնողական իրավունքներից զրկվելը:

«Ծնողական իրավունքներից զրկված ծնողները կորցնում են այն երեխայի հետ ազգակցության փաստի վրա հիմնված բոլոր իրավունքները, որի նկատմամբ ծնողական իրավունքներից նրանք զրկվել են»:

- Ծնողական իրավունքներից զրկված ծնողների երեխան պահպանո՞ւմ է արդյոք բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իր իրավունքը:

«Ծնողական իրավունքներից զրկված ծնողների երեխան պահպանում է բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իր իրավունքը»:

- Ի՞նչ կարգով են վերականգնվում ծնողական իրավունքներից զրկված ծնողի ծնողական իրավունքները:

«Ծնողական իրավունքները վերականգնվում են դատական կարգով՝ ծնողական իրավունքներից զրկված ծնողի դիմումի հիման վրա»:

- Ո՞ր դեպքում չեն կարող վերականգնվել ծնողական իրավունքները:

«Ծնողական իրավունքների վերականգնում չի թույլատր-

վում, եթե երեխան որդեգրված է, և որդեգրումը սահմանված կարգով վերացված չէ»:

- Ինչպե՞ս է որոշվում ամուսնության մեջ գտնվող անձանցից ծնված երեխայի հայրությունը:

«Եթե երեխան ծնվել է ամուսնության մեջ գտնվող անձանցից, ապա երեխայի հայր է ճանաչվում երեխայի մոր ամուսինը, իսկ երեխայի մոր ամուսնու հայրությունը հավաստվում է նրանց ամուսնության պետական գրանցումով»:

- Ինչպե՞ս է որոշվում ամուսնության մեջ չգտնվող անձանցից ծնված երեխայի հայրությունը:

«Եթե երեխան ծնվել է ամուսնալուծությունից կամ ամուսնությունն անվավեր ճանաչելուց կամ երեխայի մոր ամուսնու մահվան պահից հետո՝ երեք հարյուր օրվա ընթացքում, ապա երեխայի հայրությունը որոշվում է մոր դիմումի հիման վրա»:

- Ինչպե՞ս է որոշվում երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի հայրությունը:

«Երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի հայրությունը որոշվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ երեխայի հոր և մոր համատեղ դիմումի հիման վրա»:

- Ի՞նչ իրավաբանական ձևակերպում է իրականացվում ամուսնության տարիքը չլրացած անչափահաս ծնողներից երեխա ծնվելու դեպքում:

«Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներից երեխա ծնվելու դեպքում, մինչև ծնողների ամուսնության տարիքը լրանալը, նրանց երեխայի համար նշանակվում է խնամակալ»:

ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱԵՏԴԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

- Ո՞ր մարմիններն են անձին հաշմանդամ ծանաչում:

«Անձին հաշմանդամ են ծանաչում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունը և տարածքային բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովները (ԲՍՓՀ): Հանրապետությունում գործում է բժշկասոցիալական փորձաքննական 25 հանձնաժողով, որից 3-ը՝ մասնագիտացված (ակնաբանական, հոգեբուժական և մանկական)»:

- Ինչպե՞ս է կատարվում բժշկասոցիալական փորձաքննությունը՝ անձին հաշմանդամ ծանաչելու համար:

«Բժշկասոցիալական փորձաքննությունը կատարում է փորձաքննվողի հաշվառման կամ փաստացի բնակության վայրն սպասարկող ԲՍՓՀ-ն: Բժշկասոցիալական փորձաքննության ենթարկվելու համար անձը հանձնաժողովի նախագահին պետք է ներկայացնի գրավոր դիմում և իր անձնագիրը: Այն դեպքում, երբ քննվող անձն ինքնուրույն չի կարող ներկայացնել փաստաթղթերը, ապա դա կարող է անել նրա ներկայացուցիչը: Եթե դիմումատուն նրա ներկայացուցիչն է, ապա ներկայաց-

նում է նաև իր անձնագիրը: Մինչև 16 տարեկան երեխայի համար ներկայացվում են նրա ծննդյան վկայականը, ծնողներից մեկի կամ խնամակալի (հոգաբարձուի) անձնագիրը:

Բժշկասոցիալական փորձաքննության դիմումին կցվում են հիվանդության, վնասվածքի, խեղման հետևանքով օրգանիզմի կայուն ֆունկցիաների խանգարումով պայմանավորված առողջության խաթարումը հաստատող բժշկական փաստաթղթերը, իսկ առաջին անգամ դիմելու դեպքում՝ նաև անձի բուժումը կամ բուժսպասարկումն իրականացնող բժշկական կազմակերպության ուղեգիրը (88 ձև), որտեղ նշվում են քննվող անձի ախտորոշումը, կիրառված բուժական, վերականգնողական միջոցառումների արդյունքները:

Եթե անձը, պայմանավորված առողջական վիճակով, չի կարող ներկայանալ փորձաքննության վայր և դրա մասին նշել է դիմումում, ապա հանձնաժողովը բժշկասոցիալական փորձաքննությունը կարող է կատարել անձի գտնվելու վայրում (բնակության վայր կամ հիվանդանոց)»:

- Ինչպե՞ս է կատարվում հաշմանդամի բժշկասոցիալական փորձաքննությունը, եթե նա բուժման նպատակով գտնվում է Չայաստանի Չանրապետությունից դուրս:

«Եթե հաշմանդամը բուժման նպատակով գտնվում է Չայաստանի Չանրապետությունից դուրս, ապա նրա բժշկասոցիալական փորձաքննությունը, հաշմանդամի կամ նրա ներկայա-

ցուցչի դիմումով, կատարվում է հեռակա՝ բժշկասոցիալական փորձաքննության նախկին փաստաթղթերի և այն բժշկական կազմակերպության տված փաստաթղթերի հիման վրա, որտեղ հաշմանդամը բուժվում է»:

- *Հաշմանդամ չճանաչելու մասին որոշումն ինչպե՞ս և ի՞նչ ժամկետում է հանձնվում անձին:*

«Հանձնաժողովի նախագահը բժշկասոցիալական փորձաքննության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի ներկայությամբ հրապարակում է հանձնաժողովի որոշումը: Անձին հաշմանդամ չճանաչելու մասին հանձնաժողովի որոշումը եռօրյա ժամկետում հանձնվում է դիմողին կամ նրա ներկայացուցչին»:

- *Ի՞նչ ժամկետով է սահմանվում անձի հաշմանդամությունը:*

«1-ին խմբի հաշմանդամությունը սահմանվում է երկու տարի ժամկետով, 2-րդ և 3-րդ խմբերի հաշմանդամությունը՝ մեկ տարի ժամկետով, իսկ «հաշմանդամ երեխա» կարգավիճակը՝ երկու տարի ժամկետով կամ մինչև անձի 18 տարին լրանալը»:

- *Ե՞րբ է կատարվում հաշմանդամի վերափորձաքննությունը:*

«Հաշմանդամի վերափորձաքննությունը կատարվում է հաշմանդամության խմբի կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակի համար սահմանված ժամկետը լրանալու, նրա առողջա-

կան վիճակը վատթարանալու, նրա՝ բժշկասոցիալական փորձաքննության համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծիք հայտնաբերվելու դեպքերում, ինչպես նաև նրա (նրա օրինական ներկայացուցչի) դիմումով կամ դատարանի որոշմամբ»:

- Ո՞ր դեպքերում է սահմանվում անժամկետ հաշմանդամություն:

«Հաշմանդամության խումբը սահմանվում է անժամկետ՝

ա) անձի՝ օրենքով սահմանված տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու դեպքում,

բ) վերականգնողական միջոցառումների հեռանկարի բացակայության, հաշմանդամի սոցիալական անբավարարության վերացման կամ նվազեցման անհնարինության դեպքում, որը հետևանք է անդառնալի կառուցվածքային փոփոխություններիով և օրգանիզմի օրգանների և օրգան-համակարգերի ֆունկցիաների խանգարումով առողջության խաթարմամբ պայմանավորված կենսագործունեության կայուն սահմանափակման,

գ) ձեռնարկված վերականգնողական միջոցառումների անարդյունավետության դեպքում, որն առաջացնում է հաշմանդամի մշտական սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն (առնվազն 7 տարվա ընթացքում բժշկասոցիալական

փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների դիտման պայմաններում)»:

- *Ինչպե՞ս է վճարվում հաշմանդամության կենսաթոշակը հաշմանդամության խումբը փոխվելու դեպքում:*

«Հաշմանդամության խումբը փոխվելու դեպքում կենսաթոշակը նոր չափով վճարվում է այդ հանգամանքն առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից»:

- *Մինչև ե՞րբ է վճարվում կենսաթոշակը, եթե բժշկասոցիալական վերափորձաքննությամբ անձը հաշմանդամ չի ճանաչվել:*

«Բժշկասոցիալական վերափորձաքննությամբ հաշմանդամ չճանաչվելու դեպքում կենսաթոշակը վճարվում է մինչև հաշմանդամության ժամկետը լրանալու ամսվա վերջը»:

- *Ի՞նչ չափով և ի՞նչ կարգով է վճարվում մահացած հաշմանդամի թաղման նպաստը:*

«Կենսաթոշակառուի մահվան դեպքում վճարվում է 200.000 դրամ թաղման նպաստ: Այն վճարվում է դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակառուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում սոցիալական ապահովության տարածքային կենտրոն ներկայացնելու դեպքում: Գումարը վճարվում է դիմումը ներկայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում»:

- Թաղման նպաստ վճարվո՞ւմ է հաշմանդամ ճանաչված, բայց կենսաթոշակ ստանալու համար չդիմած անձի մահվան դեպքում:

«Օրենքով սահմանված կարգով թաղման նպաստ վճարվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված, բայց կենսաթոշակ նշանակելու համար չդիմած անձի մահվան դեպքում, եթե նա մահացել է հաշմանդամ ճանաչվելու օրվանից հետո՝ 3 ամսվա ընթացքում»:

- Թաղման նպաստ վճարվո՞ւմ է հաշմանդամության ժամկետը լրացած անձի մահվան դեպքում:

«Օրենքով սահմանված կարգով թաղման նպաստ վճարվում է հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը լրացած և վերափորձաքննության չներկայացած անձի մահվան դեպքում, եթե նա մահացել է վերափորձաքննության ժամկետը լրանալուց հետո՝ 3 ամսվա ընթացքում»:

- Ո՞ր մարմիններն են տրամադրում մասնագիտական վերականգնողական օգնություն:

«Մասնագիտական վերականգնողական օգնություն տրամադրում են՝

ա) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիա-

լական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը և դրա տարածքային մարմինները,

բ) միջին մասնագիտական և պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները,

գ) կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման գործառնություններ իրականացնող կազմակերպությունները»:

- Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցներ ստանալու համար:

«Անձը պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագա ստանալու համար դիմում է կազմակերպություն՝ ներկայացնելով.

ա) անձը հաստատող փաստաթուղթ (մինչև 16 տարեկան երեխաների համար՝ ծննդյան վկայական և նրա ծնողներից մեկի կամ օրինական ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը),

բ) համապատասխան կարգավիճակը հավաստող փաստաթուղթ,

գ) հաշմանդամներն առաջին անգամ դիմելու դեպքում՝ նաև վերականգնողական անհատական ծրագիր,

դ) լսողական սարք ստանալու համար՝ նաև սուրդոլոգի եզրակացությունը,

ե) աչքի և ձայնալարերի պրոթեզավորման համար՝ մասնագիտացված համապատասխան բժշկական կազմակերպությունների եզրակացությունները:

Պրոթեզաօրթոպեդիկ պարագաները, վերականգնման տեխնիկական և մյուս օժանդակ միջոցները տրամադրվում են անվճար»:

- Ո՞ւմ և ի՞նչ ժամկետով է անվճար տրամադրվում հաշմանդամի սայլակ:

«Առաջին խմբի հաշմանդամներին և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաներին, վերականգնողական անհատական ծրագրին համապատասխան, անվճար տրամադրվում է սայլակ:

Սայլակը հաշմանդամին տրամադրվում է 3 տարի ժամկետով»:

- Ո՞ւմ է անվճար տրամադրվում լսողական սարք:

«Լսողական սարք անվճար տրամադրվում է՝

ա) հաշմանդամներին՝ վերականգնողական անհատական ծրագրի և սուրդոլոգի եզրակացության հիման վրա,

բ) տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց՝ սուրդոլոգի եզրակացության հիման վրա,

գ) մինչև 18 տարեկան երեխաներին՝ սուրդոլոգի եզրակացության հիման վրա»:

- Ուլքե՞ր ունեն անվճար դեղորայք ստանալու իրավունք:

«1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները և հաշմանդամ երեխաներն ունեն անվճար, իսկ 3-րդ խմբի հաշմանդամները՝ 50 տոկոս զեղչով դեղորայք ստանալու իրավունք»:

- Ի՞նչ ծառայություններ են մատուցվում հաշմանդամներին տնային պայմաններում:

«Տնային պայմաններում միայնակ բնակվող 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին կամ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներից բաղկացած ընտանիքներին, որոնց կազմում չկան չափահաս, աշխատունակ անդամներ, տրամադրվում են կենցաղային և առաջնային բժշկական օգնություն, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն»:

- Ի՞նչ արտոնություններ ունեն հաշմանդամներն ուսումնական հաստատություն ընդունվելիս:

«Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած հաշմանդամներն այլ հավասար պայմանների առկայության դեպքում օգտվում են պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ ընդուն-

վելու առաջնահերթ իրավունքից՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում»:

- Ո՞ր դեպքում է հաշմանդամի կարգավիճակ ունեցող անձը ուսումնական հաստատության անվճար համակարգից տեղափոխվում վճարովի համակարգ:

«Պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգում սովորող հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության վճարովի համակարգ, եթե իրենց 18 տարին լրանալուց հետո հաշմանդամ չեն ձանաչվել»:

- Ո՞ր դեպքում է անձը ուսումնական հաստատության վճարովի համակարգից տեղափոխվում անվճար համակարգ:

«Պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող անձինք ուսումնառության ընթացքում «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ստանալու կամ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ ձանաչվելու դեպքում տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության անվճար համակարգ»:

- Ի՞նչ աշխատանքային երաշխիքներ ունի հաշմանդամը:

«Աշխատանքի ընդունելիս հաշմանդամի համար փորձաշրջան չի սահմանվում:

Անթույլատրելի են հաշմանդամության պատճառով հաշմանդամի հետ աշխատանքային պայմանագիր կնքելը կամ նրա պաշտոնը բարձրացնելը մերժելը, կազմակերպության ղեկավարության նախաձեռնությամբ աշխատանքից հեռացնելը կամ այլ աշխատանքի տեղափոխելը, բացառությամբ այն դեպքերի, երբ, ըստ բժշկասոցիալական փորձաքննության մարմինների եզրակացության, նրա առողջական վիճակը խոչընդոտում է մասնագիտական պարտականությունների կատարումը կամ սպառնում է այլ անձանց առողջությանը և աշխատանքի անվտանգությանը:

Կազմակերպության ղեկավարությանը չի թույլատրվում աշխատանքից հեռացնել համապատասխան հիմնարկներում բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնում ստացող անձանց:

Աշխատողների թվի կամ հաստիքների կրճատման ժամանակ աշխատանքի հավասար արտադրողականության և նույն որակավորման դեպքում հաշմանդամներն օգտվում են աշխատանքում մնալու առավելությունից»:

ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

- Ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում ո՞ր տարիքի երեխաների բուժումն է անվճար:

«0-18 տարեկան երեխաների բուժօգնությունն ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում կազմակերպվում է անվճար»:

- Ինչպե՞ս է ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում իրականացվում դեղերի տրամադրումը երեխաներին:

«Համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. նոյեմբերի 23-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» N1717-Ն որոշման և ՀՀ ԱՆ 27.01.2005 թ. N 74-Ն հրամաններով հաստատված «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման կարգի»՝ համապատասխան անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեն մինչև 7 տարեկան, հաշմանդամ երեխաները (մինչև 18 տարեկան), միակողմանի ծնողազուրկ երեխաները (մինչև 18 տարեկան), բազմազավակ ընտանիքի երեխաները (մինչև 18 տարեկան 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող), հաշմանդամներից բաղկացած ընտանիքների երեխաները, միայնակ մայրերի երեխաները՝ 50% զեղչով»:

- *Տնային կանչերը ո՞ր տարիքի երեխաների համար են անվճար:*

«Տեղամասային մանկաբույժի/ընտանեկան բժշկի կողմից մինչև 18 տարեկան երեխաների տնային կանչերն իրականացվում են անվճար»:

- *Ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում տրամադրվում է մանկական սնունդ, թե՞ ոչ:*

«Ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում արհեստական կաթնախառնուրդ տրամադրվում է միայն ՄԻԱՎ-վարակակիր մայրերից ծնված երեխաներին»:

- *Ինչպե՞ս և ո՞ւմ կողմից են տրամադրվում հանրակրթական դպրոց և մարզադպրոց ընդունվելու համար պահանջվող տեղեկանքները:*

«Հանրակրթական դպրոց և մարզադպրոց ընդունվելու համար պահանջվող տեղեկանքը անվճար տրամադրում են ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունները»:

- *Ինչպե՞ս է իրականացվում երեխաների ռենտգեն հետազոտությունն ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում:*

«Ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում 0-18 տարեկան երեխաների լաբորատոր-ախտորոշիչ հետազոտություններն իրականացվում են անվճար»:

- Ո՞ր տարիքի երեխաների համար է ստոմատոլոգիական օգնությունն անվճար:

«0-8 տարեկան, 12 տարեկան և սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված մինչև 18 տարեկան երեխաների ստոմատոլոգիական մասնագիտացված բուժօգնությունն իրականացվում է պետական պատվերի շրջանակներում»:

- Ո՞ր տարիքի երեխաների համար է հիվանդանոցային բուժօգնությունն անվճար:

«Մինչև 7 տարեկան և սոցիալապես անապահով ու հատուկ խմբերում ընդգրկված երեխաների հիվանդանոցային բուժօգնությունն անվճար է»:

- Ո՞ր տարիքի երեխաներին է տրվում երեխայի առողջության պետական հավաստագիր:

«Երեխայի առողջության պետական հավաստագիրը տրվում է 0-7 տարեկան (մինչև 7 տարին լրանալը) երեխաներին»:

- Ո՞ր երեխաներին է տրվում երեխայի պետական հավաստագիր:

«Երեխայի պետական հավաստագիրը տրվում է 0-7 տարեկան երեխաներին՝ անկախ նրանց սոցիալական կարգավիճակից»:

- Ո՞ր մարմինն է տրամադրում հավաստագիրը:

«Երեխայի առողջության պետական հավաստագիրը լրացվում և տրվում է այն բժշկական կազմակերպության կողմից (գյուղական առողջության կենտրոն, գյուղական բժշկական ամբուլատորիա, առողջության առաջնային պահպանման կենտրոն, պոլիկլինիկա, բուժմիավորում և այլն), որտեղ հաշվառված է երեխան, և որտեղ իրականացվում են նրա ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնությունը և հսկողությունը: 2011 թ. հունվարի 1-ին հաջորդող ժամանակահատվածում՝ այն ծննդատան կողմից, որտեղ ծնվել է նորածինը (եթե վերջինս ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ունի պետպատվերի շրջանակներում անվճար բուժօգնություն ստանալու իրավունք)»:

- Երեխայի պետական հավաստագրից բացի, հիվանդանոց դիմելիս ի՞նչ լրացուցիչ փաստաթղթեր են անհրաժեշտ:

«Հոսպիտալացման դեպքում առողջության պետական հավաստագրի հետ միասին ներկայացվում են Երեխայի ծննդյան վկայականը, ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության կողմից տրված ուղեգիրը»:

- Ինչպե՞ս է իրականացվում 7 տարեկանից բարձր հաշմանդամ երեխայի բուժումը հիվանդանոցում:

«Հաշմանդամ երեխայի հիվանդանոցային բուժօգնությունն իրականացվում է անվճար»:

- Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ հաշմանդամ երեխային հիվանդանոց ընդունվելու համար:

«7 տարեկանից բարձր հաշմանդամ երեխայի հոսպիտալացումը կատարվում է ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության տված ուղեգրի, երեխայի ծննդյան վկայականի և հաշմանդամության կենսաթոշակի վկայականի ներկայացմամբ»:

- Ո՞ր տարիքի երեխաների համար է վերականգնողական բուժօգնությունն անվճար:

«Մինչև 7 տարեկան և սոցիալապես անապահով ու հատուկ խմբերում ընդգրկված երեխաների հիվանդանոցային բուժօգնությունն իրականացվում է անվճար»:

- Որտե՞ղ է իրականացվում հենաշարժական և նյարդային համակարգի հիվանդություններով երեխաների վերականգնողական առողջարանային բուժումը:

«Հենաշարժական և նյարդային համակարգի հիվանդություններով երեխաների վերականգնողական բուժումը կարող է իրականացվել «Արարատ» մոր և մանկան առողջարանում և «Օշական» մանկական վերականգնողական կենտրոնում»:

- Ինչպե՞ս է իրականացվում հաշմանդամ երեխայի հետազոտությունը, մասնավորապես՝ կոմպյուտերային և մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիան:

«Հաշմանդամ երեխաների հատուկ և դժվարամատչելի հետազոտությունները կատարվում են անվճար՝ ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության տված հատուկ և դժվարամատչելի հետազոտությունների ուղեգրի, երեխայի ծննդյան վկայա-

կանի և հաշմանդամության կենսաթոշակի վկայականի ներկայացմամբ»:

- *Ինչպե՞ս են իրականացվում հաշմանդամ երեխայի կորսետավորումն ու օրթեզավորումը:*

«0-7 տարեկան և սոցիալապես անապահով ու հատուկ խմբերում ընդգրկված երեխաների օրթեզավորումն ու կորսետավորումը կատարվում են անվճար»:

- *Ի՞նչ ընթացակարգով են իրականացվում երեխաների օրթեզավորումն ու կորսետավորումը:*

«0-7 տարեկան և սոցիալապես անապահով ու հատուկ խմբերում ընդգրկված երեխաների օրթեզավորումն ու կորսետավորումը կատարվում են մասնագիտացված կենտրոնի կողմից տրված ուղեգրի հիման վրա՝ բժշկական հիմքերի և սոցիալական կարգավիճակը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում»:

Թեժ ԳԻԾ

52 88 72 – առողջապահության նախարարություն

52 73 43 – կրթության և գիտության նախարարություն